


ԲԱՅՆԵՐԻՆ  
Մ. ՆԱՀԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ  
Տարեկան \$1.50  
Վեցամսեայ 0.85  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
Տարեկան 10 Ժրանք  
ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան գրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:

Գին 3 Սէնթ:




# Պ Ա Յ Ն

# Հայրենեաց

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ա Ջ Գ Ա Յ Ի Ն, Գ Բ Ա Կ Ա Ն ԵՒ Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն



ՀԱՅԻՆ  
ՈՍՏՐԵՆԻԱՆԻ  
AN ARMENIAN WEEKLY.  
16 MECHANIC STREET,  
WORCESTER, MASS.

ՀԱՍՑԷ  
AMERICAN HAI PUBLISHING Co  
P. O. Box 379, Worcester, Mass

Entered at the Post Office at Worcester, as Second-Class Mail Matter.

Subscription \$1.50 a Year.

### ԵՐԿԱՐՈՒՂԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԻՆ

Մանաւանդ քաղաքական խնդիրներու մէջ նպատակներն հասնելու համար մէկ ճամբայ մ'իայն չ'կայ. այլ ճամբաները բազմազան են ու մերթ նոյն իսկ գիրար կը կտրեն խաչաձեւ:

Թաղող քաղաքականութեան «ճկուն» բացատրութիւնը տրուած է: Անվթար յարատեւութեան մէջ տոկոս, իսկ այլ լայուն պարագաներուն յարմարելով՝ անոնցմէ օգտուելու մասին ճկուն ըլլալ հարկ անհրաժեշտ է:

Հայկական Յեղափոխութիւնը իրեն նպատակ ունի գիտնալ զօրութեամբ եւրոպական միջամտութիւն մը յառաջ բերել, ի նպատակ Հայկական գաւառներու բարեկարգութեան:

Ազգովին արեւելի եւ բոցերու մէջ լողացինք. զինու պիտի մտնուինք սեղի շունեցաւ. սակայն մեր ակնկալութեանց թուականին եւրոպական միջամտութիւնը ծրագրուեցաւ գործադրութիւնն ալ արդէն սկսեալ է, — միջամտութիւն երկաթուղիներով:

Մենք կըստանանք որ թուրքիան եւրոպական պետութեանց մէջ բաժնուէր, ու բաժնուումի համաձայնութիւնը և արարքը արդէն կատարուած է, երկաթուղիներու առանցիկ շարժումներով:

Երկաթուղիներու ծանօթ արտօնութիւններով թիւրքիան բաժնուած է զըլխաւորաբար երկու մեծ պետութեանց, Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ:

Փոքր Ասիոյ Հիւսիսային մասը, Հայաստանի կեդրոնական լեռնաշղթայէն մինչեւ Վանայ լիճը, Ռուսիոյ թողուած է. ուր երկաթուղիներ շինելու առանձնաշնորհուած մի միայն Ռուսիոյ վերապահուած է. այդ սահմանին մէջ Ռուսական ազգեցեալութիւնը պիտի տիրէ ու տարածուի:

Փոքր Ասիոյ Հարաւ. մասը և միջագետք, պարունակելով Կ. Պոլիս իւր շքեղ կառուցութեամբ, Գերման երկաթուղեաց արտօնատիրութեան իրաւաստութեանը կը պատկանին: Այս երկիրներուն մէջ ալ Գերմանական ազգեցեալութիւնը պիտի տիրէ ու տարածուի:

Առ այժմ բաժանումի համաձայնութեան սահմանէն դուրս ձգուած են Մարմարայի շրջակայ գաւառները եւ Սիւրիա, վերջին տեղը առ հասարակ ժրտանական ազգեցեալութեան տակ գտնուելով:

Շատ յայտնի բան է որ երկաթուղիները իրենց տարածուած տեղերուն մէջ պիտի տանեն իրենց արտօնատէր կառավարութեան ուղղակի ազգեցեալութիւնը եւ քոնթրոլը, հետեւաբար Փոքր Ասիա ու Միջագետք. դէպի Պարսից ծոցը. Ռուսական և Գերմանական երկիրներ ըլլալու սահմանուած են:

Այս բաժանումին մէջ Անգլիոյ ուղղակի համաձայնութիւնը կայ: Մանաւանդ այնու որ, թիւրք կառավարութեան երկաթուղիներու ինչ արտօնութիւն որ շնորհուած էր Անգլիացի դրամատէրներու, Անգլիական կառավարութեան միջամտութիւնով. անոնք Գերմանիոյ փոխանցուեցան:

Հայաստանի կեդրոնական լեռնաշղթային տակ՝ մինչև Կ. Պոլիս, Ռուսիոյ սպառնալից հոսանքին առջև զօրաւոր թուրք մը հարկուոր էր, եւրոպիոյ համար ի մասնաւորի, թիւրքիա իւր անդամաների խորտակումովը, մանաւանդ Հայկական կոտորածներէն ի վեր. այդ թուրքը ըլլալէ դադարեցաւ. ուստի աշխարհի խաղաղութիւնը և Անգլիոյ սիրտը հանդարտ պահելու համար. խիստ յարմար էր որ այդ թուրքը Գերմանիա ըլլար: Գերմանիա ալ, թէ Ռուսիոյ հոսանքին առջև. թուրք մը ըլլալու, և թէ իր երկրէն ամէն տարի դուրս թափած ահագին զաղթականութեան յարմարագոյն գաղթավայր մը ունենալու կրկին շարժառիթներով՝ մանաւանդ վերջին շարժառիթը խիստ կենսական է, Գերմանիա, ամէն տարի իրենց Ամերիկայ գաղթող բազմաթիւ Գերմանացիները կը կորսնցունէ. անոնք Գերմանացի ըլլալէ կը դադարին հոս, մինչ թիւրքոյ պէս երկրի մը մէջ անոնք Գերմանացի կը մնան յաւիտեան:

Այսպիսի ահա Գերմանիա ուղեց որ թիւրքիոյ մէջ մասը սեփականէ, և Անգլիա անոր յաղողութիւնը պատկալու ուղղակի դերը ստանձնեց:

Վերջերս Գերման կառավարութիւնը, մամուլը և հասարակաց կարծիքը զարմանալի կերպով Անգլիայէր դարձած են. չնայելով որ Անգլիա՝ Գերման, արեւն կրող երկու հասարակապետութիւններ Հարաւ. Ամերիկէի մէջ իր ոտքերուն տակ առած կը ճզլէ:

1895 ին երբ Թրանսվալիա նախագահը Անգլիոյ դէմ թշնամական դիրք բռնեց, Գերմանիոյ կայսրը Նախ. Բրուկերին շնորհաւորական հեռագիր ղրկեց, իսկ այսօր նոյն կայսրը Թագուհիին շնորհաւորական հեռագիր կուտայ լորտ Բօպերթսի Թրանսվալիա վրայ տարած յաղթանակներուն համար:

Ինչու զարմանալ ուրեմն որ Գերմանիոյ կայսրը Հայկական կոտորածներու ատեն Սուլթանին հղօրագոյն պաշտպանը հանդիսացաւ. միթէ անոր այդ դիրքը և վերաբերմունքը Սուլթանին սեւ աչքերուն՝ կամ սև հոգիին սիրուն էին թէ նպատակի այդ հեռապատկերն էր որ կը հրապարակէր կայսրը և որ այսօր իրականութիւն կը հանդիսանայ, թիւրքիան մեծ բաժին մը առնելով. առանց արեւելի, առանց պատերազմի, քաղաքակրթութեան գէնքերով, երկաթուղիներու միջոցաւ:

Այսօր Գերմանիա կսկսի Միջերկրական ծովային զօրութիւնը դառնալ եւ Սեւ ծովը Ռուսական լիճ մը կըլլայ: Թիւրքը կը պատժուի, եւրոպա կապահովուի, Գերմանիա ուրախ է և Ռուսիա կիսաարտէն գոհ՝ ստիպեալ:

Ահա թէ թիւրքիոյ դամբանը ինչպէս կը թուած է ու ինտոր կը գրաւուի: Կըսուի թէ եթէ զինու զօրութեամբ միջամտուէր՝ մի գուցէ աւելի սոսկալի կոտորածներ տեղի ունենային: Այսպէս խորհուիլը ենթադրել կարելի է. մինչ խաղաղ միջոցներով, երկաթուղիներով, թիւրքիան կապել և զայն օհմարակով մորթելը (ածելին բամբակին մէջ պահուած), կրնայ իմաստութիւն համարուիլ:

Ահա ինչ որ ակներեւ է և կատարուած իրողութիւն:

Արդ մեզի կը մնայ մտածել թէ մեր գոյութիւնը ապահովելու համար ինչ կրնանք ընել թիւրքիոյ անդամատութեանը այս եղանակին և գործադրութեանը այս պարագաներուն մէջ:

(Մնացեալը յաջորդելու)

### ԿԻՐՈՒՆ ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Վերի նիւթին վրայ մեր նախորդ յօդուածովը ցուցուցեր էինք թէ, ինչպէս ամառն ու աշունը, ձմեռն ու գարունը յառաջ կուգան երկրագնդիս արեգակին դէմ բռնած տարբեր դիրքերուն հետեւանօք, ու ոչ թէ արեւին բուն զօրութիւնն է որ կաճի կամ կը նուազի, անանկ ալ Կրօնի տակ մարդկութեան կըրած օրհնութիւնները և անէ՛ծքները ուղղակի արդիւնքն են մարդկութեան կըրածի դէմ բռնած այս կամ այն դիրքին: Մնացած տակաւ արամադրութիւնը յառաջ կը բերէ և կը վայելէ կրօնական գարունն ու ամառը: Ինչէս ձմեռն իւր սառնամանիքներովը չ'կրնար ուրացում համարուիլ արեգակին ջերմագին զօրութեանը. նոյնպէս ալ կրօնական ստակիր զեղծումներն և չարիքներն չեն կրնար հերքուիլ ըլլալ. օրհնածիր կըրօնին էութեանը:

Բնութիւնն ալ «ՀՈՒՅԻ, ՀԱՅԻ ԵՒ ՈՐԴԻՅԻ» նման երրորդութիւն մը ունի որ է — ԱՋԻԵՑՈՒԹԻՒՆ, ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ և ԱՐԴԻԻՒՆՔ — ուրիշ ոճով կրնանք ըսել Ուժ, Գործողութիւն և Արտադրութիւն: Օրինակ, Արեւին ազգեցեալութիւնը կուգայ. եթէ հողին տարբերը և իր պարունակած սերմերը բուսնելու և աճելու ընդունակութիւն ունին, այդ ընդունուած ուժով բուսական գործողութիւնը կսկսի ու յառաջ կըրթայ, որոյ արդիւնքը կըլլայ բոյսը, ծառը, ծաղիկը, պըտուղը... Իսկ երբ՝ կամ արեգակին ազգեցեալութիւնը խոտորնակի կուգայ, կամ հողը և իր միջի սերմը հարկ եղած ընդունակութիւններէն դուրս են, այն ատեն արդիւնքը կըլլայ ոչ ինչ. կամ ձըմեռ միևնապարած՝ կամ անբերրի անպատ-

Անընդունակութիւնը ազգեցեալութեան գոյութեանը ուրացումն է, կոյրին համար լոյսը գոյութիւն չունի, պարարտութեանէ գուրկ աւաղուա անապատը չճանչնար արեւին կենսածիր ազգեցեալութիւնը, փտած սերմը չկրնար արտայայտել թէ արեւը ինչ ուժ ունի իրմէն ծիլ արձկել տալու: Որովհետև կենսատու ազգեցեալութեան տակ կենսական գործողութիւնը չկատարուի, արդիւնք տեղի չունենար: Միւս կողմանէ. երբ ազգեցեալութիւնը խոտորնակի կրնդունուի. անոր ուժին ներգործութիւնը այ անբաւական կրկայ արդիւնք յառաջ բերելու, և կրկին ճըմարտ ազգեցեալութեան դէմ ուրացում տեղի կուենայ:

Այս օրինակին համեմատ է որ պիտի նային կրօնական ազգեցեալութեան, ընդունակութեան և արդիւնքին վրայ:

(Շարունակելի)

Գ. Գ. Չ.

### ՀՐԱՒԻՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

Ներկայիս կուգանք յայտարարել թէ Մայիս 27 կիրակի երեկոյ Պոստօնի և շքեղակայից հայոց ընդհանուր ժողովը ներկատողութեան առնելով Ամերիկայի հայոց քաղաքացիութեան խնդիրը՝ որոշեց զիմում ընել Միացեալ Նահանգաց մէջ բնակող բոլոր ազգայնոց որ ամեն տեղ իրենց քաղաքացիութեան թուղթեր ստանան և կազմակերպուին:

Ժողովին այս որոշումը հետեւեալ գլխաւոր նկատողութեանց վրայ հիմնուած է:

Առաջին, յայտնի է երբ հայ քաղաքացիներ սակաւթիւ են և անոնք ալ կազմակերպուած չեն, իրենց անհատական բուհները ինչ կերպով ալ գործածուին բնաւ արժէք չեն ունենար:

Երկրորդ, թէ թուրքիոյ և թէ Ամերիկայի մէջ հայ քաղաքացիներու իրաւունքները և շահերը այն ատեն միայն պիտի պաշտպանուին երբ հոս հայ քաղաքացիները ստուար թիւ մը և կազմակերպեալ ուժ մը ներկայացնեն:

Երրորդ, այս երկրին մէջ ամէն օտար գաղթականութիւն այսպիսի կազմակերպութեան շնորհիւ կրցած է քաղաքական ուժ և ազգեցեալութիւն ստանալ և այդ կերպով ապահովել իր նիւթական և բարոյական շահերը:

Ներկայիս լինելով նախագահի ընտրութեան տարին պատեհ առիթ մ'է ցոյց տալ Ամերիկայի հայոց բուհեւում ուժը, ուստի կը հրաւիրենք Միացեալ Նահանգաց բոլոր հայերը քաղաքացիական քըլիպներ կազմել և այս կերպով իրազոր ծել մօտաւոր ապագայի մէջ ՀԱՅ ԱՄԵՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ մը:

Կը յուսանք թէ հայ մամուլը, կզերը և ժողովուրդին լրջախոհ մասը ուժ պիտի տան այս գաղափարին և փութացնեն անոր իրականացումը:

Ի Դիմաց Ընդհ. Ժողովոյ

Ատենապետ

Կ. Յ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ԹՆ ԾԱՌՈՎԻ  
ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Ահա այսպէս բանտարկեալները փախուսող պատճառ դարձաւ Փայաջուկցի Համբօի ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ, որով ձերբակալուեցաւ Երուսաղէմ Ղազարեան իւր ձիերի հետ:

Պարսիկ կառավարութիւնը իւր ձերբակալած կաշախներէն 13 ի չափ տաճկահայտաւորները, առաջին անգամ լինելով, յանձնեց թուրք կառավարութեան մի քանիներն ալ իբրև Ռուսահայտաւոր Դավրէթ զրկելով յանձնեց ռուս հիւպատոսին որ իւր երկիրը զրկեց: Սակայն Երուսաղէմ Ղազարեանը դեռ բաւական ժամանակ մնաց Սալմաստի բանտ, իւր բանտարկութիւնը պէտք է ասել որ բաւական զոհուանալով իւր պատճառեց իւր հակառակորդ կուսակցութեան (բըժիշկ Նիկողոս) շրջանակի մէջ, որոնք չափազանց պազ վերարեւոյնեացի զէպիստոս ձերբակալուած: Կաշախը հրաշք կը գործէ Պարսկաստանի մէջ: Երուսաղէին միակ կարեկցող և դատակից բարեկամ օրիորդ Սաթեմիկն էր, որ իւր բարեկամի ազատութեան սիրով վառուած մինչև իսկ քանիցս, իւր հակառակորդներին, բժիշկի և համախոհներուն դիմում արաց մեծապէս մար կաշախը վերադարձուցաւ: Պարսիկ կառավարութիւն լաւ կը ճանչնար զայն, ուստի իւր թակարդի մէջ ինկած որսը շատ ալ ածանազին չէր ուզեր ծախել: Փայաջուկցի յայտնի վաճառական Պ. Ջիւրայէլ Բուտողեան, իր ազգեցեցութեամբ ամէն ջանք ի գործ դրեց մի քանի հարիւր թուման (աւար) կաշախը վաճառել զայն, մինչև անգամ Օր. Սաթեմիկը ներկայացաւ Ծառ-Ձատեան (բառաւոր) իւր Երուսաղէի ամուսին և խնդրեց իրեն շնորհել իր էրկիրը, արտասուակից ազբաններով ուրանալով Խանասորի փաթեթի մասնակցիւրը և ցուցնելով թէ Վերեք Դավրէթի ուսուցիչներն էին, արձակուրդով եկած են Սալմաստ ման գալու, և այլն:

Բայց ի գուր: Բիւզ պէջը ամէն անցուդարձին տեղեկ էր. լաւ կը ճանչնար Երուսաղէի և օրը օրին Դավրէթի թուրք հիւպատոսին կը տեղեկագրէր ամէն բան իմիր-Նիդամին հասկնելով Երուսաղէ Ղազարեան Դավրէթ բերել տուաւ, որ մի գուցէ հայեր յայտնին զայն կաշախով ազատել Սալմաստի մէջ: Ամէնքն ալ զիտէին որ Երուսաղէ Ռուսահայտաւոր էր. նա երկար ժամանակ ապրած էր Դավրէթ. իբրև տեսուչ իբրև ուսուցիչ և թէ ուսուցիչ թուրք հիւպատոսները կը ճանչնային զինք իբրև յեղափոխական...:

Զարմանալի գուգաղիպութիւն. թուրք Բոնսոլ և ռուս հիւպատոս երկուքն ալ միանգամայն կուզէին Երուսաղէ Դավրէթ բերել տալ. թուրքը յայտնապէս, բայց ռուսը գաղտնապէս, վասն զի այս վերջին կուզեր որ պաշտօնապէս իւր պաշտպանութիւն խնդրուի Երուսաղէի կողմէն, իբրև Ռուսահայտաւոր, որովհետև Երուսաղէ չէ թէ իւր ռուս կառավարութեան հակառակ ընթացք մը բռնած էր գոնէ Խանասորի ցոյցի ժամանակ, այլ նոյն իսկ ռուս քաղաքակրթութեան զէմ մեղանշած էր իր աքսորավայրէն փախելով: Պետրով ինք զիտէր թէ Երուսաղէ Թիֆլիսի Արղուութեան Իշխանի տոհմէն էր և թէ Տրապիզոնի մէջ թուրք կառավարութեան կողմէն ռուսին յանձնուած էր. որ աքսորած էր զինք ներքին Ռուսաստան, ուրիշ փախչելով Պարսկաստան անցած էր, և այլն: Այս պատճառներով Պետրով կուզեր անպատճառ Երուսաղէ իր Ռուսահայտաւոր լինելով խոստովանի, որպէս զի այլևս իւր արժանաւոր վարձատրութիւնը զբտնէ:

Խանասորի ցոյցի պատճառաւ Պարսկաստանի մէջ հաւաքուած Դաշնակցականները մէջ երկու կուսակցութիւն կար այդ թուականներին. մէկը Ոսկան-Երուսաղէի կուսակցութիւնը, որ ամէն ջանքով ցոյց մը կազմակերպելու հակառակեցաւ մինչև վերջին շունչ. իսկ միւս բժիշկ-Նիկողոսի կուսակցութիւնը, որը Ոսկանը չեզոքացնելով վերջ ի վերջոյ Երուսաղէին սկսածայ համակերպիլ

պարտաւորուց: Այս բոլոր պարագաները Դավրէթի բոլոր հիւպատոսները մեզմէ շատ շուտ և տեղն ի տեղ կը հասկնային...:

Օր. Սաթեմիկ Սալմաստէն ամէն յոյսը կարած Դավրէթ եկաւ, ճար մը անել կարենալու համար: Այդ ժամանակ Գեթ. Սարաջեան Յովսէփի Մ. Վարդապետ Գարատաղէն նոր վերադարձած էր, ուր գացած էր Հայ մեկեղեքների մէջ հատուցութիւն մը գոյացնելու խնդրով: Միջանկեալ ասեմ որ առաջնորդ Հայր սուրբ երթալէն առաջ, ՅԻ Գարեան, Դաշնակցականներէն հաստատական խօսք առած էր ու է ցոյց կամ շարժում չանելու. և իրենք ալ մանաւանդ Նիկողոսը, Ազնիւ խօսքով վստահացուցած էին Հայր սուրբին թէ իրենց մտադրութեան վճարականապէս ետ պիտի կենան և այլն... (Դաշնակցութիւն և ազնուութիւն):

Օր. Սաթեմիկ, Համբարձում Մելիք Սարգսեան և ուրիշներ առաջնորդարան կերթան Հայր սուրբէն խնդրելու որ ճար մը անէ Երուսաղէ ազատելու: Սակայն Հայր սուրբը կը հասկնայ թէ կառավարութիւնը, մանաւանդ Հմիր-Նիդամի, որ շատ բարեկամ էր իրեն, իրեն զէմ չափազանց զայրացած են. զինք գիտակ և գործակից համարելով այդ շարժման: Ինչպէս արդէն իւր բացակայութեան առաջնորդ Հայր սուրբի քաղաքական հակառակորդները ու թշնամիները այդպէս հասկնուցած էին նահանգապետին. ուստի կը թեկադրէ իրենց որ մի քիչ համբերեն, մինչև որ կարենայ իր մասին եղած կասկածը փարատել և Հմիր-Նիդամի բարեկամութիւնը կրկին շահիլ: Երուսաղէ ազատելու ոչ մի ջանք չիմանելով խոստանալով: Սակայն անոնք չուզելով համբերել, Թաշիր-պաշի (վաճառականապետ) Սարգիս Օհանեանին կը դիմեն և անոր միջոցով Պետրովի միջամտութիւնը կը խնդրեն: Թաշիր-պաշին այն կեղտոտ հայրերէն է Դավրէթի մէջ, որ ամենաստոր մատուցութիւններ անելէ գատ Պետրովի ձեռքի մէջ ամենօրեայ գործիքն դարձած է միշտ ուղղալու և ոտնակոխ անելու: Տեղի է առել որ այդպիսի մի խնդրի առթիւ սըրբազան Հայր սուրբը քաղութիւն ունեցաւ զինք առաջնորդարանէն խայտառակաբար վնասելու, որ Դավրէթի ծանօթ խոստովութեան առթիւ եկած մեքենայութիւններ կուզէր դարձնել: Այդ պարագային երբ այդ մտադրութիւն Սարգսեան Հայր սուրբին կը յայտնեն, նա ոչ միայն չ'համաձայնիր. այլ սխալը ցուցնելով կը հակառակի մինչև իսկ:

Եթէ չեմ սխալիր, այս ժամանակ Երուսաղէ Դավրէթ բերուած էր, միայն երբ Պետրով միջամտեց. այս անգամ այլ ևս ոչ մի միջոցով Հնար չեղաւ զայն ազատել, որովհետև չէ թէ միայն Պետրով չէր ուզեր շաղատել, հապա թուրք Բոնսոլ իբրև ցոյցի հրամանատարներէն մէկին, կը հետապնդէր և Պարսիկ կառավարութիւնը կը պահանջէր անոր հետապնդի իւր երկրէն, որը իսկոյն մեծ ուրախութեամբ գործադրեց Պետրով:

Երուսաղէն առաջ 6-7 Ռուսահայտաւորներ ալ խրկուեցան սակայն անոնք ամէնքն ալ ազատուեցան, միայն զինուորութեան փախողները կրկին զինուորութեան տարուեցան. սակայն Երուսաղէ տարի է մը առելի մնաց Թիֆլիսի բանտ, ուր արտէն բանտարկուած էին Պ. Գարեգին Բաղէչեան, Փանոս Թէրլէմէզեան, Նաթանեան, Մալխաս, Ազրիպասեան կարապետ, Հ. ԳարաւէՖէրեան և ուրիշները (այս առեղծուածը թող մնայ) որոյմէ առիթ երկուքը Պարսկաստան, ուստի վան (Բայց ետ վերադարձուեցան սահմանադրութեան) իսկ Երուսաղէ 3-5 տարուան աքսորի դատաւարութեանը Աթատէրխան, Մալխաս և ԳարաւէՖէրեան Ռուստով և Կուրբով աքսորուեցան անժամանակ կերպով, բայց վերջերս լսածիս նայելով, Երուսաղէ յղած են անելի ներսերը զէպի Սարաթով: Բայց ընթերցողը թող չ'խորհի թէ Երուսաղէ Խանասորի ցոյցի պատճառաւ արտօժուեցաւ Ռուս կառավարութիւնէ, ոչ. որովհետև իւր միւս ընկերներ անմիջապէս ազատուեցան այդ խնդրով, այլ որովհետև Ռուս կառավարութեան զէմ գործած էր...:

Ահա այսպէս իրողութիւն, իբրև կանանտես գիտակից եղած անց ու դարձերին, բաւական պարզ կերպով հրապարակ դնելով, աղնիւ ընթացողներին ու շարժութեան կը յանձնարարեմ վերջնական եղրակացութեան մը յանգնելու թէ արդեօք եղած է Մատուցութիւն, թէ խօսուածը ճանաչի Չրպարութիւն մ'է և ես կանցնիմ մի ուրիշ պարագայէլ բարացատրելով վերջ տալ յօդուածիս: Ամէն պարագային պարտաօտ լինելով ազնիւ օրէն և գիտակցութեան հրապարակ իջնող հակառակորդներին պատասխանելու և ամբողջ ասածներս տեղն ու տեղ, մէկիկ մէկիկ բուն գործի միջավայրի մէջ հաստատել տալու...:

(Շարունակելի)

զատ եղբորը հետ ամուսնացած ըլլալուն խղճահարութեանը. այս խառն ու ահեղ յուզմանց ցնցումը այնքան զօրաւոր կըլլայ, որ կինը կէս ուշաթափ գետինը կը փռուի և կը մրմնջէ. «Դու իմ եղբայրս ես, կորսուած եղբայրս!...»:

Հոտ կինը առաջին անգամը ըլլալով կը պատմէ իր կորսուած եղբորը վրայ, ու երկուքն ալ կը համոզուին թէ, քոյր և եղբայր են...:

Կորուստ գաղտնիքը թագուն պահել կը շարունակեն նոյն յարկին տակ, տարբեր սենականերու մէջ միասին ապրիլ. այնուհետեւ քոյր և եղբայր: Կինը թէ մտաւոր և թէ ֆիզիքական վիճակը չարաչար կերպով ցնցուած և խախտած էր, ուրախութեան և խղճահարութեան ընդդիմաբար յորձանքէն: Իբր չորս արդի խանգարուած առողջութիւնով մը կապրի. անցեալ օր տունէն ելաւ հիւանդանոց մը երթալու, ելքաբարկան կառքին սպասելու միջոցին փողոցին վերայ կը մեռնի, և անոր ցուրտ դիակին վրայ կը պարզուի սրտառու զաղտնիքը...:

ԶԱՒԵՆ

ՏԵՐ. Ներկայիս մամուլի և լեզուի կարեւոր նիւթ եղող Պատուոյ Առեւտրի խնդիրն բաւական տաքցած և անոր իրագործման խիստ օգտակարութիւնը ակներեւ ըլլալուն համար Փրօֆիտէնցին այլ փութաց իւր բաժնի այդ ազգօգուտ առաջարկին թափ ու մղում տալու, յուսալով որ անոր իրագործումն սերոյ և միութեան ճամբան պիտի բանայ և այդու կուսակցութիւններն նոր ուժով պիտի օժտուին:

Այս առթիւ Ապրիլ 29 ի երկուցնան Փրօֆիտէնցի Ազգ. սրահին մէջ ոչ կուսակցական սեպուածներու համախմբմամբը հետեւեալ արարքն տեղի ունեցաւ:

Ազգային երգով մը ժողովը բացուելէ վերջ որոշուեցաւ որ:

Ա. Ուէ է կուսակցական չի մնայ սրահին մէջ, և ահա ընդ փոյթ ոմանք կամա՛ իսկ մի քանի կուսակցականք մատնանիչ լինելով, դուրս մեկնեցան ազնուարար:

Բ. Գրեթէ միահամուռ հաւանութեամբ որոշուեցաւ որ մնացեալը յակնէ յանուանէ արձանագրութիւն իբր անխարբար ոչ կուսակցականք համախմբմամբը 138 անուններ:

Գ. Երկու կուսակցութիւններէն պատուոյ տանաւ մը պահանջելու օգտակարութիւնը համախմբուած բացատրելէն վերջ, որոշուեցաւ որ ոչ կուսակցականք պահանջեն նիւթ եղող Ատեանին ի սէր խաղաղութեան և Հայտնութեան:

Յօդուտ ազգիւր բարբառութեան սոյն որոշումն գործադրելու համար 7 անգամ ներքէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրելի եղաւ ժողովին վերջին գործը:

Առ այս նպատակ կը հրահրեմք նաև իւրաքանչիւր խաղաղասէր և հայտարարասէր Հայ անհատ:

Ի դիմաց Երուսաղէի Ոչ-Կուսակցականաց: Առեւտրապետ Ա. Կոստանեան Ս. Սողիկեան

Իբր 30 տարի առաջ 7 տարեկան մանչ մը Պրուքլին իր տունէն կը կորուսի, եւ անոր ծնողքը այլ իր վրայ ուէ տեղեկութիւն չեն առնել, յաւէտ մեռած կը համարեն:

Կորսուած տղուն քոյրը սուկէ իբր 5 տարի առաջ Պրուքլինէն Հօպքըն կը փոխադրուի. ուր կը ծանօթանայ բարեկերթ ու գեղեցիկ երիտասարդի մը. երկուստեք իրարու կը սիրահարին և կ'ամուսնանան:

Օրիորդը իր ամուսնոյն վարմանց, շարժմանց ու բնաւորութեան վրայ այնպիսի յատկանիշներ կը նշմարէ՝ որոնք իր (Օրիորդին) ընտանեացը յատուկ են: Ատկէ կորսուած եղբայրը միաքը կիյնայ որմէ ետքը իր կասկածը զօրացուեցող շատ աւելի սրոջ ու գօրաւոր նշաններ կը տեսնէ: Օրմը ամուսնոյն պատմել կուտայ իր անցեալը ի մանկութենէ, երբ երիտասարդը կ'սկսի խօսիլ իր մ'օրը հօրը և քօրը վրայ, կը պատմէ տունէն կորուսելու ևն. կինը կը հետաքննուի, եւ վերջապէս կը համոզուի թէ իր սյդ ամուսինը իր կորսուած հարազատ եղբայրն է եղբը...:

Կորսուած եղբայրը գտած ըլլալու ուրախութիւնը կը խառնուի իւր հարա-

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ

Վասնայի «Երուսաղէ»-ը որ առաջինը եղաւ Պ. Քաղաքի խաչադրութիւնը հրատարակող, իւր 21 րդ. թիւով հետեւեալը կարտատպէ. «1896 ին չեմք գիտեր որ կողմէն իրկուածն Պէրէճի (Փիլիք) Մաքսատուն 10 սնտուկ փանփուշտներ՝ Արթուր Սուլեյման անուն հայու մը որ, այդ կողմերը անձանօթ է...»:

Հիմա՛ չորս տարի յետոյ այդ անախտ փանփուշտները՝ անուրդի հանածէ յոյն Մաքսային Վաքարութիւնը և արդէ մեծ մասը ծախած, ու գանձած է՝ չորս տարուան տուգանքը. իսկ աւելցած 100 Փր. բազարատան յանձնել՝ եթէ Արթուրն է!! Երևանի Երկուստեք պարագային այդ Փրանքները՝ որոց շատ պէտք ունինք, Աթէ՛քի Արքունի գանձարանը պիտի խրկուի:

Մեր գէրատուութիւնները ո՛րքան կը շատան յեղափոխական անկարգութիւններն ալ նոյնքան կը կրկնուին: Դեռ Պ. Քաղաքի խաչադրութիւնը չպատճառած, այս հռչակաւոր անկարգութիւնը վրայ կը հասնի: Ո՛ր կը խրկուին այս փանփուշտները, ո՛ր է Արթուրն անձանօթը:

Առատաձեռն նուէրները՝ որոցմէ զոյցած էր տաւ սընտուկ փանփուշտները կը պարունակեն 120 000 հրացանի և 4750 վեցհարուածեանի փանփուշտներ, որոնք ինչ սիրելի նպատակի համար նուիրուած էին, ու այսօր Երուսաղէի գանձարանը՝ այդ անկարգութեան շնորհիւ պիտի ստանայ կողոպուտը անտէր ազգին:

Ու հիմա՛ այսքան տխուր իրողութիւններէ յետոյ, պարզէ զիտնալ թէ՛ ինչո՞ւ անվայել ամականներ կը շարունակեն ամէն անձանց հասցէին, որք Յեղափոխական անկարգութիւնները ջնջելու կաշխատին:

Մուծին մէջ այս կպրկելի արարքը՝ որմէ զգուանք կը գայ ամէն տղնիւ Հայ, ո՛չ ոք կրնայ վստահօրէն վերադրել այս կամ այն կուսակցութեան անհոգութեանը՝ ժամանակը պիտի պարզէ ամէն բան՝ սպասելով ստոր, այժմէն աւելորդ չէ քանիմը դիտողութիւններ ընել այս զեղծումներու մասին:

Արկայ սակայն, իր տխուր երեւոյթով՝ կուսակցական անկարգութիւն կը բուրէ: Ինչ թափթփուկ յեղափոխութիւն. այն է այն միջոցը որով Հայ ազգը պիտի փրկուի իր դարաւոր ստոր կուսակցութիւնէն:

Կուսակցութիւնները իրենց մղութեան հետ՝ ազգին մէջ երկպառակութիւններ մուծեցին, ու տեսնելով կոյր վրաստահարութիւն ամէն անոց վրայ որք «Ինոցանէ» են և առանց նախնական քննութեան՝ կը յանձնեն գրամ, զէնք և այլն: Ու եթէ փորձուի պահմը անոր անկեղծութեանը վրայ՝ դիտողութիւններ ընել, ալ՝ բանդ բուրդէ, ճիւղ և ճիւղ Սուլթանին կեկնը կ'ըլլայ:

Միայն Գրօսականները չեն որ, գէնքի պատրաստութեան վրայ են: Հայկական Յեղափոխութիւնը իր ծագումն իմր գեղեցիկ Մրաքիւր ունեցածէ թուրքիոյ

Հայերը՝ ինքնապաշտպանութեան ստիպողական հարկին մէջ զննելու... Ու մասնաւորապէս հաւատարիմ նոյն ծրագրին, շարունակողները են օրինաւոր կարգապահութեամբ:

Այս անկարգութիւնները սակայն, որ վերջերս կրկնուի սկսած են դժբախտաբար, նորամուտ են ու զգուշելի:

Հայ ժողովուրդը որ միակ տուժողն է՝ ինքը պիտի ուզէ իր պատագրութեան ճամբան. ջնջելով անկարգութիւնները և եթէ հարկ ըլլայ ամբողջ կազմակերպութիւն մը:

ԳԱՌՆԻԿ

ՅՈՒՆՏՐԱՌՈՒՄՆԵՐ

Չարժեք պատասխանել այնպիսիներուն՝ որոնք խելքերին կը յոգնեցունեն յոռեղջիւ մեր միայն ընելու. սակայն կարեւոր իրողութիւն մը պարզելու համար երկու խօսք ըսեմ:

Շատ անգամ խորին ցաւով այն կարծիքը յայտնեմ եմ թէ մեր ազգին մէջ տիրար անձ և տիրար յեղափոխական չկայ: Երբեք հետեւեալ երկու տողը՝ «Աստուած վկայ որ կը յաղթէ ինք եթէ մէկ անձնուէր ունենայինք» յիշելով, ըսեմ եմ «Անձնուէր շատ ունինք. այդ «Մէկը» տիրարն է որ կը պակասի:

Պ. Արքիարի մասին ալ խօսելով, ընդունելու համար թէ այն ալ իր մարդկային թերութիւնները ունի. ըսեմ եմ «Անշուշտ Տի. Պ. Արքիարի սակայն չեմ ճանչնար զայն ալ»:

Արդ այն պարտք որ Պ. Արքիարի տիրար յեղափոխական ջրլալը՝ անոր քրտնալիս յանցանք մը ցուցնել կուզէ. ու եթէ «տիրար» բառին իմաստը դիտէ, կրնայ մեզի տիրար հայ յեղափոխական մը ներկայացունել, առանց նահատակներու յիշատակին դաշտելու, որ պաշտելի է:

Մինչև ե՛րբ այս յոռեղջիւները... իմ գործածած տիրար բառը տանել «Երկարագիր» շինել և անկէ ալ «Անկարգութիւն» իմաստը հանել...:

Այդ յոռեղջիւն մին համանման է անոր կցուած միւս ամբաստանութիւնն ալ:

Այլ չպիտի պատասխանեմ, գիտնալով որ դիմացիները խօսքը իրենց ըլլալու համար, միշտ պիտի գրեն, մինչև որ վերջին խօսքը իրենք ըսած ըլլան, ինչ որ ըրին Շնթիցի վարժապետին խնդրոյն ալ մէջը:

Գ.

ԻՆՉՈՒՂԱՐՄԱՆԱԼ

Չարմացանք որ Պ. Վառանանը զարմացրէ, որ Պ. Արքիարի մասին իր գործածները չենք հասկցիր:

Պ. Վառանանը պէտք էր գիտնալ թէ, Դրօշակի յակնուածին պարունակութիւնը բաւական էր Պ. Արքիարը քանի մը անգամ կարկուտ. մեր գիտնալ ուղածը շատ մը անգամներ աւելի կարելու նորանոր ամբաստանութեանց բարդ ի բարդ գիզուելը չէ. հեղեղը մարդուն զլինէն վեր բարձրանալէն ետքը՝ կուզէ թիւ մը ըլլայ, կուզէ հազար կանգուն, սարքերութիւն չենք. մեր հասկնալ ուղածն այն է թէ, Յակնուածին մէջ ըսուած, խօսուած, լսուած, զրուցուած, ենթադրուած, կասկածուած, ծանր ամբաստանութիւնները հիմ ունին, հաստատի են, փաստացի են, վաւերական են, ճիշտ են կամ ոչ, երբ ժողովուրդը Դրօշակի ըսածներուն հաւատք չընծայեր՝ մինչև որ անոնք փորձաքարին չ'զարնուին, ինչո՞ւ կարեւորութիւն տայ Վառանանի մը անպատասխանատու և անպաշտօն գրածներուն. որոնք խառնաշփոթութեանց ցանկը միայն կ'երկարեն:

Արդեօք պահանջուած պատուոյ ատենը կազմուած է Պ. Վառանանի՞ անձին մէջ, որ իր պաշտօն ստացած՝ ինքքն իրեն կը դատէ ու կը դատապարտէ, չ'ըսեմ որ օրինական և անաչառ ատենն մը կը պահանջուի:

Այդ մասին մեր իրեն ուղղուած հարցերուն ինչո՞ւ ուղղակի պատասխանել չուզեմ. եթէ կուզեն որ իրենց ըսածներէն բան հասկնանք, թող պատասխանեն մեր հարցումներուն, իսկ եթէ

մտքերը շփոթելու և պղտորելու շահագրգռութիւնն է որ ունին, դեռ շատ պիտի գարմանան որ իրենց երկարապատում գրուածքներէն բան չհասկցուիր: Մեր հարցերուն ուղղակի պատասխան կուզենք:

Փրոֆ. Կարապետեանի քարոզաւ Գառնի Եկեղեցաց Գուրգէն սրբատաճին դրուատիք մը ուղղած է Փրոֆ. Եսայի հասցէին. մենք մեր յարգելի թղթակիցէն աւելի յարգանք և համակերանք ունինք դէպի մեծարոյ Փրոֆ. Եսայի իսկ խնդիրը անոր անձին չէ, այլ կարգացած ճառին վրայ է. չէ՞ որ այդ ճառը ինքն իրեն համար աւելի գորաւոր կըրնայ խօսիլ քան ուրիշ որևէ պերճախօսութիւն. ու քանի որ մենք պատրաստակա նութիւն յայտնեմք ենք զայն բառ առ բառ հրատարակելու, յարգելի Փրոֆ. Եսայի պաշտօնակալու մասին ատկէ աւելի գործնական միջոց չէինք կրնար ընձևել:

Կը ցանկանք որ այդ ճառի մասին մեզի տրուելը հասած են բացի Փրոֆ. Եսայիէն, ուրիշ անգրէտ ալ: Գանի որ կըսուի թէ սխալ հասկցուած է. երբ գըրաւոր կերպով հրատարակուի թիւրիմացութիւնները կրնան վերնալ: Չնդուինք որ մարդիկ սխալ կը հասկնան. այլ միջոցներ գործածենք որ սխալ հասկացողողութիւնները փարատուին: Կոյրին առջեւն քայլակողութեան քարը հարկ է վերցունել:

Պ.—Ա.—Ժ.—Պատուէն կը գրէ.

«Նիւ-Եորք հրատարակուող հայ թերթի 52րդ. թիւոյ մէջ կարդայի Պատուէն նամակ մը Ա. ստորագրութեամբ. որ ի միջի այլոց կըրէ իր վերակազմեալ Հնչակեաններէն ինձի դիմած են որ չհեղքը անսնով ժողով մը դուժարելու տալով Պ. Արքիարի համար պատուոյ ատենան պահանջենք, և. արդ կուզամ հրատարակաւ յայտնելու. եթէ նարակազմ Հնչակեաններէն որևէ անգամ ինձի բընաւ բան մը ըսած չէ պատուոյ ատենան պահանջելու համար ժողով գումարելու. բոլորովին սխալ է:

Ալ բաւական է ժողովուրդի միտքը «Ըսի ըսուով դաղեցնել, հայ ժողովուրդը մտաւոր սնուղի շատ պէտք ունի, այդպիսի անհիմն խօսքերով մի չենք ունենք մտքերը. ոճրագործութիւն է հայ յուլեան տաքնապալի միջոցին փուճ ու սուտ խօսքերով ժամանակ վատնել»:

Պ.—Ա.—Ժ.—Ի վերջի խօսքերուն համաձայն ենք մենք այն ալ պիտի գրառենք Նիւ-Եորք հրատարակուող թերթին մէջ զգրուած խեղճութեամբներով. յոռեղջիւնութիւններով և սուտեղով: Մեր լրագրին էջերը անձուկ են ու սուղ, պիտի փանանք անոնց մէջ լեցունել ամենէն աւելի օգտակար բաները ըստ կարի:

Հերքման գրիք ստացել ենք նաև Նիւ-Եորքի և ինի յանձնարուածներէն որոնք կը հաւատեն թէ պատուոյ ատենան ի մասին մեր գրկից թերթին մէջ հրատարակուած անկարտու բաները արդիւնք են հակառակ գրի և կեցծիքի:

Ինի մէջ ալ պատուոյ ատենան մասին օրինաւոր ժողով կազմուեր և օրինաւոր քուէարկութիւնով որու շունները արուեր են:

Ամերիկա բերուած ու կառավարութեան են զրկուած որբերու խնդրոյն մէջ խառնուած էր և Տիար Սողոմոն Պատանեանի անունը: Մենք այդ խնդրոյ մասին տարբեր տեղերէ շատ մը նամակներ արած ենք, որոյ ամէնքն ալ կը հաստատեն թէ Տիար Ս. Պատանեան որբերու խնդրոյն հետ որևէ կապ չունի, բացի անկէ՛ որ ինքն ալ նոյն ատեն Ամերիկայ գալու վրայ ըլլալով. իրմէ խնդրուած է որ ճամբան համի հոգ տանել որբերու, ու ինչ որ ըրած է որբոյ և զթութեան պարտք մը կատարելու համար ըրած է:

Շիքակոյն մեր թղթակիցը կը գրէ թէ Ապրիլ 28 ին տեղւոյն մարզական խումբը հանգէս մը անցով ի նպաստ որբերուն 120 տօլարի գումար հասցի գոյացուցեր է: Ուզեմ են հանգանակու-

թիւնը շարունակել և գումարը հասուցեր են 150 տօլարի Փրոֆ. Թաթարեանի անխնայ ու հայրենասիրական ջանից արդեամբ խումբը կը յառաջդիմէ: Կըսէ նաև թէ մարզական խմբի սրահին մէջ ոչ կուտակակալներ փափաք յայտնեմ են որ իրենք ալ գիտում ընեն «Մարտի և «Դրօշակի» որպէս զի չեզոք ատենան մը առջեւ Պ. Արքիարի յանցաւոր կամ անպարտ ըլլալը ճշդ են:

Փրոֆ. Կարապետեանի հայ նուագածուաց խումբը ամսոյս 16 շաբաթ երեկոյ նուագահանգէս մը պիտի տայ Պատան 45 էլիօթ փողոցի հայոց սովորական ժողովասրահին մէջ:

Փրոֆ. Կարապետեանի խումբը այս անգամ պատրաստած է «Մամուէլ» ի դերը ներկայացնել ինպատ որբերուն տեղւոյն որբարկունձ արկնանց հովանաւորութեան տակ:

Յառաջիկայ Յունիս Թ շաբաթ երեկոյ ժամը 7. 45 ին Տրամաթիք Հոլին մէջ տեղի պիտի ունենայ: Անշուշտ ամէն ոք կը փութայ քաջայերել այդ կրկնակի քաջալերութեան արժանի ներկայացումը:

Հայկ. Միութիւնն՝ ամսոյս 2 ի շաբաթ երեկոյն դեռևս կ'անտին մէջ, ցաւակցութեան քուէ տուաւ յոտնկայս Միութեան Պատուոյ Անդամ, Մեծանուն Յովհաննէս Այվազովսի մահուան ատիւ և յանձնարարեց դիւանին որ գրաւոր ալ հաղորդուին առ Տիկին Յ. Այվազովսի, Միութեան զգացմանց արտայայտութիւնով:

Հայկ. Միութիւնն ամսոյս 16 ին պիտի ունենայ իր բացման հանդէսն ընդհարակալին ժողովով, առ այս մասնաւոր յայտագիր մը կը պատրաստուի ինձի օր:

Մի քանի նոր անդամներ ալ աւելցան և յոյս կայ որ ի մօտոյ հարիւրի հասնի այդ թիւը:

Յ. Ա.

Կ. Պոլիս 13 Ապրիլ 1900

Մեծ. Պ. Պ. Պայանեան և Պ. Մարտուպեան. և պատուարժան անգամը որբարկունձ ընկերութեան:

Ի Սէլմ (Մաս)

Ստացանք ձեր սիրելութեանց Մարտ 4. 17 թուականաւ նամակն և ընդ նմին 10 օսմ. լիբայի դուժարն, զոր հանգանակելով տեղոյդ բարեկէր ազգայնոց մէջ, յղեր էիք մեզ ի նպաստ գաւառաբնակ որբոց:

Առաջին անգամը չէ որ այդ տեղը ընտրու մեր պատուական տղայինք գիտակ իրենց մարդասիրական պարտականութեան, կը փութան օչնութիւն հասցնելն, նոյն իսկ այնչէր հեռուէն, գաւառաբնակ թշուառ որբերու որք առանց այդպիսի նպատակներու ո՞ գիտէ ինչ ցաւայի վաղճան պիտի ունենային: Սրչնեալ ըլլաւ ուրեմն ըսողը բարեկէր նուիրատուք ու որբարկունձ գործին ստատորոգք, որո՞ց բազմազգութիւն Աստուած վարձահատոյց լինի իւր անհուն ողորութեամբը և պահէ գրեթե իր ամրակուռ աջոյն ներքեւ:

Աղօթարար

Հրժ. Պարիարք Կ. Պոլսոյ Մաղաբեայ Արքեպիսկոպոս

Յառաջիկայ կիրակի Յունիս 10 Հոգեգալստեան Տօնի առթիւ Արժ. Տ. Ղեւնդ վարդապետ Պատարագ պիտի մատուցանէ Ս. Փ. Եկեղեցոյ մէջ և քարոզ պիտի խօսի:

Ժամերգութիւնը կսկսի առաւօտեան ժամը 9 1/2 ին և Ս. Պատարագը կսկսի 10 1/2: Յետ աւարտման Եկեղեցոյ 2. Ե. Բ. Ընկերութեան կիրակնորակ դարձը տեղի կուենայ ժողովարարահին մէջ, ուր ամէն ոք ազատ է գալու:

Հոգարարձութիւն Ս. Փ. Եկեղեցոյ

— Յառաջիկայ կիրակի (Յունիս 10ը) կէս օրէն վերջ, ժամը 4 30 ին տեղւոյս «Հայկական Գրադարանի» Հիմնարկութեան Ըրդ. Տարեկարձ Հանգէսը պիտի կատարուի Ազգային ժողովարարահին մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ԳՐՈՒՆԻԿ

Սուշօվա դանուղ Արժ. Տ. Արսէն վարդապետ վեհուէրի, որ Լօրէնսի թեմին հովիւ ընտրուած էր, իմբագրութեանս եկած նամակէ մը կիմանանք թէ նորին Արժ. ը ճամբայ ելած է իւր նոր պաշտօնատեղին գալու համար:

Պ. Ջանչեանց Տիգրանակերտի Ազգ. Որբանոցին 600 ոսկի յատկացուցած է մինչև վեց տարի:

Բարիզի հայոց հոգեւոր հովիւ Տէր Վառձապուհ քահանայ որ գատական Տօնին առթիւ ի նպաստ Հայաստանի որբերուն հանգանակութիւն բացած էր, 2624 Փրք. հանգանակելով զրկած է Պատրիարքարան:

Տօք. Երուանդ Մանուէլեան հայ ազգի երիտասարդ բժիշկը որ ասկից առաջ բժշկութեան մէջ ըրած կարեւոր գիտի մը համար Բարիզի մարդարանական ընկերութեան անգամ ընտրուած էր. այս անտամ կը լսենք որ բժշկական կաճառին պատուոյ անգամ ընտրուէր է:

ԲԱՆԱՍԵՐ

Հանդէս Հնախօսական, Պատմական Լեզուաբանական եւ Կենսական:

բանասէրը իր տեսակով, առաջինն է մեր պարբերական հրատարակութեանց մէջ: Կը հրատարակուի տարեկան չորս գիրք (3 ամիսը անգամ մը): Տնօրէնութեամբ Տիար՝ Բաժնեգրին և աշխատակցութեամբ ազգային և օտար Արեւելագիտաց: Բացուած է՝ Բրք. տարւոյ բաժանորդութիւնը:

Թերթ մը հրատարակելու մարմալը չէ որ, մղած է իւր խմբագիր-տնօրէնին այս հրատարակութեանը:

Տիար՝ Կ. Յ. Բաժնեգրին երկար տարիներէ ի վեր նուիրուած իւր սիրած ճիւղին. այսօր ծանօթ է իւր Հնախօսական համութեամբ ու հրատարակ կը դնէ՝ տարիներով իւր աշխատութեան արդիւնքը: Բաժնեգրին է տարեկան 20 Փրանգ (\$ 4): — Դիմել՝ Բաժնեգրին 112 Bd. Rechecho art Paris Ամերիկայի գործակալն է՝ Պ. Յակոբ Գրասպեան, որուն միջոցաւ ևս կրնան ստանալ: Հասցէն P. O. Box, 95 Station A, WORCESTER, MASS

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ», ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԻԹ

Կը հրատարակուի ամէն ամսոյ սկիզբը իր Գրական յօդուածներէն զատ՝ ճշգրիտ տեղեկութիւն կը տրուի հայ-գրականութեան, պատմութեան, լեզուի նկատմամբ և ամէն ամիս ելած նո հրատարակուած մասին: Նոյնպէս ըննադատական տեղեկութիւն կը տրուի ազգային լրագրաց մէջ երեւցած կարեւոր գրութեանց վրայ և այլն: Տարեկան բաժնեգրին է՝ 10 Փրանգ. (2 Տօլար) Դիմել՝ Հետեւեալ հասցէին:

A la Redaction de La Revue «Hantess» Vienne (Autriche) VI 1/2 Mechitharistengasse 4.

«ՀԱՅԵԼԻ»

Շաբաթաթերթ. Ազգային և Զուգեչտական:

Այս երգիծախառն շաբաթաթերթը, իր զննչատելի բնորոշութեանցը համար՝ մասնաւորապէս յանձնարարելի է:

Բաժնեգրին է՝ տարեկան 10 Փրանգ Դիմել՝ Տիգրան Փափազեան Yeldiz Tabia Varna (Bulgarie)

ԿՈՒՉՈՒԻ

Գիրք մը թարգմանելու համար Հայերէն և Արաբերէնի հմուտ անձի մը հասցէն կը փնտռուի:

Դիմել

Մանուկ Շիրինեանի

# ՔԱՂԱՔԱԿԱՑ

ՌՈՒՍՈՒՑ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Կ. Պոլսէն հեռագիր մը կը հաւաստէ թէ, Ռուսիա լուրջ ու զօրաւոր կերպիւ Հայկական խնդիրը ձեռք առերէ: Չարը անցեալ չորեքշաբթի օրը իր Կ. Պոլսոյ դեսպանին միջոցովը զեկուցեր է Բ. Գրան թէ, Հայկական հարստահարութիւնները պէտք է որ անմիջապէս վերջ գտնեն, հակառակ պարագային Ռուս կառավարութիւնը զինու զօրութեամբ պիտի միջամտէ:

Ռուս կառավարութիւնը միջերկրականի և Չինական ջուրերուն վրայ նաւաբեր մեծամեծ պատրաստութիւններ տեսնելու, իր ծովային պատերազմական ուժերը աւելցնելու խիստ փութկոտ ջանքեր ի գործ կը դնէ:

Ռուսական բերաւոր զօրքերը կը խաղան դէպի Չինական ցամաքը: «Պօքսեր» Չինական ապստամբներու բանակները Փեքին մայրաքաղաքին վրայ յարձակելու վրայ են. կառավարութիւնը ինքզինքը բաւական չգտնելով զանոնք զուպելու, Ռուսիոյ դեսպանը Չինի արտաստաբեր գործոց նախարարին առաջարկերէ որ եթէ կամի, կրնայ Ռուս խաղաղանք վարձել և զանոնք զրկել ապստամբներուն վրայ:

Այս «գեղեցիկ ու քաղցր» առաջարկին համար նախարարը շնորհակալութիւն յայտնելու և ըսելու է, կը «խորհիմք»: Խնամակալ կայսրուհին կը հակառակի Պօքսերներուն վրայ բռնու ուժ գործածելու:

Վերջին լուրերուն համաձայն Չինաստանի վրայ վտանգները խիստ ծանրաբեռնուած են. Խնամակալ թագուհին կը քաջալերէ ապստամբները ու Ռուսիա ինքն իրենը խաղաղանք կը զրկէ «Պօքսերներուն» վրայ զանոնք պատժելու:

Պատերազմը գործնականապէս վերջացած պէտք է համարել. Թրանսկասպի մայրաքաղաքը, Փրէթորիա ալ գրաւուեցաւ Լօրտ Բօպէրիսէն. Լօնտօնի տօնախմբութեանց մոլեգնութիւնը անընկալագործ է:

Նախ. Բրուկլին 2,000,000 լիբրայի չափով սկի. ամբողջ գանձը առեր փախելու է, առանց օտար կամաւորներու եւ ստորադաս պաշտօնեաներու թողակնելը վճարելու. ու այդ պատճառաւ մեծ դժգոհութիւն ու զայրութ յառաջ եկեր է:

Պօքս Բնդհ. Հրամանատար Պօթա մայրաքաղաքը անպաման կերպով յանձնելու է իր բանակովը քաջուեր հեռացելու, վրայ կայ որ Անգլիական բանակը ետեւէն հասնի և պաշարէ:

Ինչպէս ըսած էինք. այսուհետեւ եթէ Պօքսերը կողմն կատարազմը շարունակել, խմբական կռիւներու պիտի սկսին:

Կը խնդրուի Պոլսէն Խնդիր Սարաֆեան անուն անձին հասցէն որ Ամերիկայի մէջ վաճառականութիւնով կապրի. հօր երայրը գինք կը փնտռէ, գրեւ յըմբարգրութեան:

Վարձու կը տրուի 5 մեծ սենեակներով տուն մը երկրորդ հարկի վրայ բաղնիքով միասին, ամսական 10 տօլ. դիմել 10 Օլ-Տէյ փողոց Ուստր Մէս

Չայն Հայրենացի 39 րդ. Թուոյ մէջ զարմանօք կարգացինք ծանուցում մը «կարապետ թորիկեան» ստորագրութեամբ:

Մեզի անձանթ այդ անձը կ'ծախ' մէկ ութերորդ բաժին, Սմրվիլ քաղաքի 39 Սմրվիլ Ավիւնի ի փայտի գործարանին:

Ըստ որում մենք այդ անունով ընկեր շունինք, հետեւապէս սխալմունք մը կայ:

Կը ՓնՏՈՒՒԻ  
Ղազար Մարտիկեան կամ Տոստոբեան Սեբաստիոյ Եարասար գիւղէն 27-28 տարեկան միջնահասակ Պոլսոյ 96 թ դէպքէն վերջ Ամերիկա եկած է: Հասցէն գիւցողները թող գրեն յմբարգրութեան:

**ԱՂԻ**  
**ԸՆՏԻՐ ՊՈՒԼՂՈՒՐ**  
Ուստրի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատած ենք մեր յատուկ պաշտօնի գործարանը: Սոյն գործին մէջ մեծ փորձառութիւն ունենալով, ամենայն ցորենէ կը պատրաստենք ընտիր պոլիտր, որ իր մաքրութեամբ և ուրիշ լաւ յատկութիւններովն անտիփիլիններու և ճաշարանապաններու գնահատութեան արժանացած է: Կը պատրաստենք նաև նոյնպէս ընտիր ծեծած և կորկոտ:  
Ուստի ամեն ով որ կուզէ ընտիր և անորժահամ կերակուր լինելու պաշտօնը և ծեծած ունենալ, թող դիմէ ուղղակի մեզ: Ապստամբներ փութով կը կատարուին. մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել հետեւալ հասցէին:  
Ուստր, Պոլսոյ Միացեալ Ընդ. 151 Իւնիոն սթ., Ուստր Մասս.  
Տաճկական տեսակ տեսակ ապրանքներ ալ կը ծախենք:

**ՄԵՍ ՎԱՃԱՌԱՆՈՑ ՉԵՌԻՔ ԾԱՅԵՆԻՆԻ**  
**ՆԻ ԱՃՈՒՐԴԻ (ՕՔՇԸՆ)**  
**ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՍՐԱՊԵԱՆ**  
151 Մէյն Ըսթրիթ Ուստր Մէս  
Մենք կը գնենք և կը ծախենք տնական ամէն կարգի կահք և գոյք (Ֆրիշըլը) նոր կամ հին:  
Մենք ամէն միջոց ունինք մեր մանուսը մեր Նոյ յաճախողները գոհացունելու թէ ապրանքին լաւութիւնով և թէ գնոյն արժանութիւնով:  
Դիւրութեան համար ապառիկի դիւրութիւն ալ հաստատուեց. մէկ շորքը կանխիկ մնացեալ ամսավճարով:  
Ամէն երկուշաբթի առաւօտ ժամը 10 1/2 է և շաբթի կէս օրին ժամը 2 է նոր անորդ (օքշըն) ունինք:  
Դրսի քաղաքներու ապստամբները չուտով ու ճշտութեամբ կը կատարենք:

**THOMAJANIAN BROTHERS,**  
52 Southbridge St.,  
Worcester, Mass.

Ամերիկայի հայ քաղթականութեան կուգամք յայտարարել, ամէն դիւրութիւն կըննայինք նաեւրու տոմակ տալու մասին. դէպի Թուրքիա կամ եւրոպա. մասնագործապէս կը յանձնարարեմք (Ֆրէնչ Լայն) կողուած գիծն որ ամենապատուական և ամենաարագ նաեւրու ունի և ամէն հինգշաբթի առաւօտեան ժամը 10 ին ճամբայ կեյնեն Նիւ-Եորքէն:  
Դրամ կը փոխադրենք Մարսել հեռագրաւ թէ նամակաւ. նոյնպէս Եւրոպայի բոլոր գլխաւոր քաղաքաց մէջ. որք կը գանձուին առանց որեէ ծախուց և դժուարութեանց: մեր տան ապահովութեան մասին հայրենակիցք արգէն տեղեկ են, անցեալ 10 տարուան մեր ընթացքէն. նաև Կենսա, Վիրաբուրութեան, ամենամեծ լաւ ընկերութեանց գործակալութիւնը ըստանցած եմք. ասոր համար ալ օտարներու դիմելէ առաջ մեզի դիմեցէք. նամակներու պատասխանները մեր անմիջական ուղարկութեանը կուտամք ինչպէս սովորութիւնէ:

**ՋԵՆՏԱՎԱՆՈՒ**  
**ԵՂԱՐԻ ԹՈՎՄԱՃԱՆՆԵԱՆ**  
52 Սաւուրթ Պրիք. Փողոց  
Ուստր Մէս

**ԿՈՒՉԷՔ ՄԵՏԱՔՍԻ ԳՈՐԾ ՈՒՆԵՆԱԼ**  
Ընդհանրապէս մենք հայերս գործի մարդիկ ճանչցուած ենք, և կարողներ շատ ունինք: Այս առթիւ կոչ կընեմ բոլոր անոնց որք առնուազն քանիմը հարիւր տօլար ունին ու անկախ գործ մը ընել կուզեն ընկերակցութեամբ: Մետաքսի գործին մէջ չափ կայ. Թերեւս շատեր զիտեն որ իմ հայրենական գործը այս էր, և քանի մը տարուայ փորձառութիւն այս երկրին մէջ մեծ դիւրութիւն պիտի տայ մեր անկախութե գործին:

Անոնք որ կը սիրեն ինձ հետ այս գործին սկսիլ, նամակաւ նամակաւ կամ անձամբ կրնան դիմել ինձ:  
Կ. Գ. Յապրիկեան  
856 10. րդ. Ավիւն  
Նիւ-Եորք

**Բ Ա Յ Ե Ի**  
«ԴԱԻԻԹ-ԲԷԿ» Ա. Բ. Գ Հատր վերջարանով և «ԿՍԵՄԵՐ» Բ. Հատր լիակատար:  
Իւրաքանչիւր բաժանորդագրին է 5 Երլին:  
Լոյս կ'տեսնեն ներկայ 1900 թիւ ընթացքում և անմիջապէս կուղարկուին բաժանորդներին ըրպէս «ՍԱՄՈՒԷԼ» եղաւ:  
Բաժնի միւս Երկերը ունենալ ցանկացողները պիտի ուղղակի դիմեն մեզ: Մեզին կարելի է ստանալ նաև Խրիմեան Հայրիկի, Երեւնցի, Պեարոս Դուրեանի և ուրիշ նշանաւոր գրուածքներ:  
Հասցէ.  
MME. RAFFI,  
47 Uxbridge Road,  
London, W., England.

**ԿՈՒՉԷՔ ԴՐԱՄ ՓՈՒՍԿՐԵՆԻ**  
Դիմեցէք Աւ.  
Սարգիս Գ. Սարաֆեան  
1060 Փ. Օ. Պօքս, Ուստր, Մաս.  
Դրամ կը փոխադրենք Թիւրքիոյ բոլոր քաղաքները: Կեդրոնատեղին է Խարբըր, Տեար Յովհաննէս Խարբուրէան, որ երկար տարիներու գործունէութեամբ և վարկով հանրածանօթ է և Կ. Պոլսոյ Տ. Գէորգ Խարբուրէան: Մեր Գործակալներն են. Մալթեա Սարգիս Պօշուգլեան. Չմշկածակ՝ Մէյրլէյր Ինճէյեան. Բալու՝ Գարեգին Բիւրճեան. Չնքուշ՝ Յակոբ Տաղտիկէլեան: Թիւրքիոյ ուրիշ բոլոր քաղաքներն ալ դրամ կը փոխադրենք Խարբըրի միջոցաւ:  
Մարսել թէ կեռագրով և թէ նամակով դրամ կը փոխադրենք և նաւային տոմակներ կուտանք:  
Ուստրի մէջ կը վաճառենք պամեա սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ Տաճկական ապրանքներ:  
Խանութիւն հասցէն է՝ 14 1/2 Արջ Սթ. Ուստր. Մաս.  
ՈՒՇԱՐԻՈՒԹԻՒՆ. — Մեզ դրամ լըրկելու է Մընի Օրտըրով, կամ Պանքայի չէքով:

**ԴՐԱՄ ԿԸ ՓՈՒՍԿՐԵՆԻ**  
Ամերիկայեան հայ քաղթականութեան կուգամ յայտարարել որ հայրենիք դրամ փոխադրելու դիւրութիւն ընծայելու համար, փոխադրի նոր գործով սկսած եմ ի Պօլսոյ շատ մը բարեկաններու ու ծանօթ հայրենակիցներու թախանձանաց գոյացում տալու. աւելորդ է ոչինչ գովեստներ ընել Խարբըրի ինչպէս նաև Տիգրանակեթի մէջ ընկերութեան Պէրպէրեան եղբոր տան վարկին ու վստայութեան նկատմամբ. ինչ որ արդէն երկար տարիներէ ի վեր կը վստայելու պէտք եղած վստայութիւնն ու վարկը գործի հրապարակի վրայ: Գործը պիտի հաստատէ ու վըրայէ զայն, և այս համարձակութեամբ կերպիւսարիմ ամէն անոնց, որք կուզեն Փ. գրի գործին ձեռն Թաւ. Լ. § 4,500 է կուտանք:  
Մասնաւոր գործակատարներ ունինք Խարբըր, Մալթեա, Տիգրանակեթ, Սեբաստիա, Հալէպ, Կ. Պոլսոյ և Մարսիլիա ինչպէս ուրիշ այլ և այլ քաղաքներ: Մարսիլիայէն եկողներու դրամի և այլ պէտքերու մասին խնամք և դիւրութեան միջոցներ կընձեռենք: Հայաշատ քաղաքներու դիւրութիւն ընծայելու համար երկու գործակալներս կը նշանակեմ որոնց կրնան դիմել. — Ուստր. Գ. Գրիգոր Մարգարեան. 157 Սըմըր Սթ. Նիւ Եորքի և Նիւ Ճըրզիի Պ. Մարտիոս Թաւճեան 251 Ուիլմ Սթ. Նիւ Եորք  
Ինձ նամակ և դրամ գրկողներ պէտք է հետեւալ հասցէով թղթակցին՝  
P. O. Box 2652. Իսկ զիս անձամբ տեսնել ուղղակի կրնան դիմել՝  
344 Cambridge St.,  
Boston, Mass.  
ՅՈՎՀ. Մ. ԳԵՐԳԵՐԵԱՆ

**ԱՂԻ**  
Կը ծանուցանենք Հայ Հասարակութեան թէ՛ Պոսթմի Թայլըր փողոցին մէջ նոր խանութ մը բացած ենք, ուր կը վաճառուին ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԸՆՏԻՐ ՆՊԱՐԵՂԵՆԵՐ ՉՈՓՍՈՐ ԳՆԵՐՈՎ:  
Յանձնարարութիւնը կը կատարուի փութով և խնամով:  
**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՍՄՈՒԷԼԵԱՆ**  
**ԱՐԱՄ ԱՍՔԱՆԱՉ**  
Մեր Հասցէն է  
Tyler Grocery Co.  
113 Tyler St. Boston Mass.

**ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱԿԱՆ**  
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ**  
Պօլսոյ, Վենետիկի, Մ. Մամուրեանի և Տիլիի Բաժնիկի մասնաւոր կարգադրութիւն ըրած՝ նաև ուրիշ գրատուններէ ալ գրքեր բերել տալու միջոցներ ձեռք բերած ըլլալով՝ կուգամ գրատէր հայրենակիցներու ծանուցանել թէ իրենց փափաքած գրքերը սովորական գնով կարճ ժամանակի մը մէջ բերել տալու պատրաստ եմ. քիչ ժամանակ վերջը մեր քով արդէն պահեստի պիտի ունենանք ամէն ժողովրդական գրեանց շարք մը:  
Փափաքողաց գրացուցակ կը ղըրկենք: Մեծ քանակութեամբ գընաղներու՝ մասնաւոր զեղջ կընենք:  
Դիմել յ. ՊԵՏԻՇԵԱՆ  
390 P O BOX  
LOWELL MASS

**Ա. Ա. Հ. Տ.**  
Հանդէս Աղապիւն, Գրական և Գեղարուեստական. բացուած է Բրդ. տարուայ Բաժանորդագրութիւնը:  
Հասցէ  
**ԱՐՇԱԿ ՉՊԱՆԵԱՆ**  
6 Place de L'odeon Paris



**Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ**  
**ՄԵՍՍԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԻՔԱՐԱՆԱԿ**  
**Ս. ՏԱՄՊՈՒՐԱՅԵԱՆ**  
Նիւ-Եորք 509 2րդ. Ավիւն  
Տեղական և Արեւելեան բաղմատեսակ նպարեղներ, լաւագոյն տեսակ ընդեղներ, եղանակին համեմատ բանջարեղներ և առօրեայ թարմ միս: Հայկական պանիր փաւուներ 12 սէնթ, մեծ քանակ գնողաց 10 սէնթ. Ուստրի պատուական Պղուր և Մեծած փաւուներ 3 սէնթի:  
Զիթապտուղ (զէյթուն) փաւուներ 10 ս. մեծ քանակ գնողաց մասնաւոր զեղջ կընեմ, 5 փաւուներ քէն սայլոյ հատը 25 սէնթ մեծ քանակ գնողաց 20 սէնթ հատը: Մեր քով միշտ պատրաստ կայ Հայկական ամեն տեսակ ապրանքներ, ալ զը թրուած եսփրաղ, ընտիր կորկոտ, անթրապ հալիպի, կանտնջ զէյթուն. Զէյթուն եաղի (ընտիր տեսակէն) մաքրուած լըքում տեսակներովը, ոսպ աղացուած կամ չաղցուած, սոււմախ, սիսեռ Պօլսոյ խաչար պանիր, լէպլէպի շաքա՛րի տեսակներով, քիմիոն, անասն, պատ՛ տուական խուչիկ. աղւոր ալիւրէ հաց 2 հատը 5 սէնթ, և այլն... Նամակով ե՛ր զեծ յանձնարարութիւնը փութով և քիչ վարձքով կը կատարենք մեր յատուկ կառքով: վճարու մերը կանխիկ են և ոչ ապառիկ:  
Նաև կը ծախեմ Պամիւս, Խայսերի Պատրմա և Սուճուղ:  
**ԿԱՐՈՐ ԱՂԻ**  
Ճաշակի յարմար պատուական ապուստ (Խայսերի Պատրմա) կը պատրաստուի, գինն է՝ փաւուներ 35 սէնթ. վաճառման կեդրոնատեղին՝  
**Տ. ՍԷՄԷՐԵԱՆ**  
113 TYLER ST BOSTON MASS